ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 73 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 531-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի հունիսի 19-ի «Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովի կազմակերպման հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» N 531-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) «Արտաքին գործերի նախարարի տեղակալ» բառերից առաջ լրացնել «Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ» բառերը.

2) «Երևանի քաղաքապետի տեղակալ (համաձայնությամբ)» բառերից հետո լրացնել «Վարչապետի հասարակական հիմունքներով խորհրդական» բառերը.

3) «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն (համաձայնությամբ)» բառերից հետո լրացնել «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)» բառերը.

4) «Արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության պետ» բառերից հետո հանել «հանձնաժողովի քարտուղար» բառերը և լրացնել «Արտաքին

գործերի նախարարության Եվրոպական ինտեգրման վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)» բառերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ